ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԸ

24.11.2021 17:48

2021 թվականի նոյեմբերի 24-ին տեղի է ունեցել հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու համար ամեն տարի կազմակերպվող մրցույթի գրավոր փուլը:

Մրցույթին մասնակացելու համար դիմել են 27 փաստաբաններ:

Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդները կհրավիրվեն հարցազրույցի և մրցույթը հաղթելու դեպքում կընդգրկվեն հանրային պաշտպանի թեկնածությունների համալրված ցուցակում որում ընդգրկված փաստաբանների շարքից պետք է կատարվեն նշանակումներ:

Հիշեցնենք, որ 2022 թվականի համար հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը հայտարարել է մրցույթ՝

1) **քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար**՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը, ինչպես նաև հետագա հնարավոր թափուր հաստիքները համալրելու համար.

2) **քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար**՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը, ինչպես նաև հետագա հնարավոր թափուր հաստիքները համալրելու համար:









Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })